## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ՆԱՄԱԿՆԵՐ

*Ապրիլ 5, առաւօտեան ժամը 10ին, Երուսաղէմի Վսեմ. Կառավարիչը Պատրիարքարան գալով ամբողջ Միաբանութեան ներկայութեան յանձնեց երկու պաշտօնագիրներ Գերշ. Տ. Սուրէն և Գերշ. Տ. Հայրիկ Սրբազաններուն, և հրահանգեց որ Պատրիարքարանի բանալիները տըրուին այս վերջիններուն։*

*Ստորև կը դնենք զոյգ պաշտօնագիրներուն թարգմանութիւնը։*

Համար 3886    1960 Ապրիլ 4

Գերաշնորհ

Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ՔԷՄՀԱՃԵԱՆ

Պատրիարքարան Հայոց, Երուսաղէմ

Ընդհանուր ապահովութեան եւ հանրային օգտին համար որոշուեցաւ որ, վաղը առաւօտ Երեքշաբթի 5 Ապրիլ 1960էն սկսեալ, դադրեցուիք Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Գործոց Վարիչի պաշտօնէն, զոր կը կատարէիք առժամեայ կերպով:

Զայս հաղորդելով՝ կը ներկայացնեմ Ձեզի իմ յարգալից շնորհակալութիւնս այն ջանքերուն համար, զոր դուք կատարեցիք ի ծառայութիւն Պատրիարքարանին, հակառակ Ձեր յառաջացեալ տարիքին: Մաղթելով Ձեզի երջանկութիւն եւ արեւշատութիւն,

յարգանաց հաւաստեօք

ՀԱՍԱՆ ԷԼ-ՔԷԹԻՊ

ԿԱՌԱՎԱՐԻՉ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

---

Նախարարութիւն Ներքին Գործոց

Կառավարչատուն Երուսաղէմի, Երուսաղէմ

Համար 3882    1960 Ապրիլ 4

Գերաշնորհ

Տ. ՀԱՅՐԻԿ ԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ

Պատրիարքարան Հայոց, Երուսաղէմ

Հանրային օգտին սիրոյն որոշուեցաւ Ձեզ նշանակել Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Ընդհ. Գործոց Վարիչ: Պարտք կ'իյնայ Ձեր վրայ կարելի փութով եւ Պատրիարքութեան կանոններուն համաձայն առնել անհրաժեշտ եղող բոլոր քայլերը եւ միջոցները Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը օժտելու նոր Գահակալով մը:

Ձեզի յաջողութիւն մաղթելով այս պաշտօնին մէջ, կը յուսամ թէ արդարութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան ոգին, եւ իսկական սէրը նպատակակէտը պիտի ըլլայ Ձեր բոլորին, եւ թէ կարգուկանոնը եւ բարեացակամութիւնը հասարակաց պիտի ըլլայ ամէն անոնց որ կը գտնուին Պատրիարքարանի մէջ:

Հաճեցէք ընդունիլ յարգանքներս

ՀԱՍԱՆ ԷԼ-ՔԷԹԻՊ

ԿԱՌԱՎԱՐԻՉ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

**Ծ. Խ.**— *Երուսաղէմի Վսեմ. Փոխ-Կառավարիչը, 1956 Յուն. 10ին, Պատրիարքարանի բանալիները, առնելով Տեղապահի Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեանէն, յանձնած էր Գերաշնորհ Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի։*

---

### ՀԵՌԱԳԻՐ

Երուսաղէմ, 12 Ապրիլ 1960

Ն. Ս. ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Ս. Զատկի հրաշափառ տօնին առթիւ, յանուն մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի հայ համայնքին, կը ներկայացնենք Ձերդ Ս. Օծութեան մեր յարգալիր շնորհաւորութիւնները եւ կը մաղթենք Ձեզ երկար եւ բարգաւաճ կեանք եւ յարատեւութիւն, Մայր Աթոռին հաստատութիւն եւ Հայց. Ս. Եկեղեցիին ոյժ եւ միութիւն:

ՀԱՅՐԻԿ ԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ

Փոխանորդ Տեղապահի

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան



digitised by A.R.A.R.@

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Ուր. 1 Ապրիլ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.։

● Շբ. 2 Ապրիլ. — Ս. Գր. Լուսաւորչի Մուտն ի վիրապ տօնին առիթով, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Տէփոյեան։

— Կէսօրէ վերջ, Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեանի գլխաւորութեամբ, Միաբանութենէն մաս մը ինքնաշարժերով բարձրացաւ Ձիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբատեղւոյն վրայ կառուցուած մեր վրանամատրան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը։ Իրիկնադէմին կատարուեցան «Հսկումն» և առաւօտեան ժամերգութիւն, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զգլանեան։ Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 11ին։

● Կիր. 3 Ապրիլ. — Գալստեան: Առաւօտուն, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Ձիթենեաց լեռ և «Հրաշափառաւ» մուտք գործեց Համբարձման Սրբատեղին՝ ուր մեր վրանամատրան մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան՝ եպիսկոպոսական խոյր ի գլուխ։ Քարոզեց Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Ղազարեան, յայտնելով թէ ամէնքս ալ ենթակայ ենք փորձութիւններու որոնցմէ կրնանք յաղթահարուիլ։ Սակայն պէտք է չյուսահատիլ ու վերականգնելու փորձեր ընել։ Քարոզէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Նորոգ հանգուցեալ Ս. Էջմիածնի Միաբան Տ. Վահան Արքեպս. Կոստանեանի հոգւոյն համար։

● Եշ. 7 Ապրիլ. — Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Ընկեցէք»ի վերջին ժամերգութիւնը։

● Ուր. 8 Ապրիլ. — Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Արեւագալ»ի վերջին ժամերգութիւնը։

● Շբ. 9 Ապրիլ. — Յիշատակ յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Պատարագեց Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։ Ս. Պատարագի ընթացքին, Ս. Թարգմ. Վարժարանի բովանդակ ուսանողութիւնն ու ուսուցչական կազմը, ինչպէս նաև օտար վարժարաններու հայ ուսանողներ առին Ս. Հաղորդութիւն։

— Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառաւ» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և Նախատօնակ՝ մեր վերնամատրան մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան։

● Կիր. 10 Ապրիլ. — Ծաղկազարդ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Տէփոյեան։ Ապա, Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի գլխաւորութեամբ, կատարուեցաւ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ։ Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց և արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետևէին Ղպտոց և Ասորւոց թափօրները։ Ժամը 1ին, Միաբանութիւնը շքերթով վերադարձաւ Մայրավանք, ու Հայոց Թաղի մուտքէն «Որ զխորհուրդ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան՝ ուր Գերշ. Սրբազանը «Պահպանիչ»ով օրհնեց ու արձակեց հաւատացեալ և ուխտաւոր ժողովուրդը։

— Կէսօրէ վերջ, շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ նախ «Անդաստան», և պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւն՝ հոգեզմայլ շարականներով ընդմիջուած։ Ապա կատարուեցաւ «Դռնբացէք»ի սրտագրաւ արարողութիւնը։ Հանդիսութեանց կը նախագահէր Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։ Այս առթիւ, Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. քարոզեց, շեշտելով բարեգործութեան առաքինութիւնը, և կոչ ուղղեց որ յաւարտ պաշտամունքի, եկեղեցւոյ մուտքին՝ ի նպաստ Ազունիէի Բուժարանին դրուած պնակներուն նուիրահաւաքութեան մասնակցին առատաձեռն կերպով։ Կարդացուեցաւ վարագոյրներու բացման մասնակցող բարեպաշտ ուխտաւորաց անուանացանկը, որմէ ետք կատարուեցաւ վարագոյրներու բացման արարողութիւնը։

● Գշ. 12 Ապրիլ. — Աւագ Երեքշաբթի: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի բակի մեր Ս. Յովհ. Աւետարանչի մատրան մէջ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զգլանեան։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեան, որ թափօրի իւրաքանչիւր հանգրուանին ուխտաւորաց տուաւ բացատրական քարոզներ։

● Եշ. 14 Ապրիլ. — Աւագ Հինգշաբթի: Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարողաց»։ Ապա, կարճ դադարէ մը ետք, մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ՝ Աւագ Սեղանին վրայ։ Պատարագիչն էր Գերշ. Տ. Ասողիկ Եպս.։ Կարդացուեցաւ Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդութեան ճառը, գերազանցօրէն վեհ և շինիչ խրատներով լի։ Մեծ թիւով հաւատացեալներ մասնակցեցան Հաղորդութեան Ս. խորհուրդին։

digitised by A.R.A.R.@

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ, Գերշ. Տ. Հայրիկ Եպիսկ.ի նախագահութեամբ կատարուեցաւ «Ոտնալուայի» արարողութեան կարգը։ Ներկայ էր խուռն բազմութիւն ժողովրդեան։ Եկեղեցւոյ դասը լեցուն էր օտար բարձրաստիճան հիւրերով և հրաւիրեալներով,-ընդ որս և Երուսաղէմի Վսեմ. Կառավարիչը, Վսեմ. Մութասարըֆը, Զինուորական Հրամանատարը, Ընդհ. Ոստիկանապետը, Ս. Տեղեաց Ոստիկանապետը, հիւպատոսական մարմիններ և կրօնական ներկայացուցիչներ։ Արարողութեանց աւարտին, ըստ սովորութեան, Անկլիքան Գերշ. Արքեպս.ը, եպիսկոպոսական զգեստաւորմամբ, Աւագ Սեղանի բեմէն, Անգլերէն լեզուով կարդաց Ս. Աւետարանէն Ոտնալուայի վերաբերեալ համարները։

— Ժամը 5ին, փոքր թափօր մը մեկնեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցին (Ա. բանտ Քրիստոսի), ուր կատարուած Ս. Աւետարանի ընթերցումէն ետք, թափօրը ուղղուեցաւ դէպի տաճարի բակին մէջ գտնուող Ս. Ձիթենիի ծառը։ Թափօրը կը գլխաւորէր վանուց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ., որ, Ս. Ծառին առջև եւ կատարուած Աւետարանի ընթերցումէն ետք, խօսեցաւ քարոզ մը՝ վանքին տանիքներն ու բակը խռնուած բազմահարիւր ժողովուրդին, տալով նաև նոյն վանքին պատմականը։

— Գիշերուան ժամը 7էն մինչև 12, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման Կարգը»՝ տխրազդեցիկ խորհրդաւորութեամբ։ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. քարոզով մը վեր հանեց «լացի գիշերուան» փրկարար նշանակութիւնը։

● Ուր. 15 Ապրիլ. — Աւագ Ուրբաթ: Կէսօրէ վերջ ժամը 12.30ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատարան մէջ կատարուեցաւ «Խաչելութեան Կարգը»։

— Կէսօրէ վերջ ժամը 3ին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ հանդիսաւոր «Թաղման Կարգը»՝ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի նախագահութեամբ։

● Շբ. 16 Ապրիլ. — Ճրագալոյց Ս. Զատկի: Առաւօտեան ժամը 9.30ին, ըստ սովորութեան, Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ։ Ժամը 10.30ին, Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր յաջորդաբար տեղի ունեցան «Լուսաւորեայի» հանդիսութիւնն ու մեծահանդէս թափօրը։ Ժամը 12.30ին, յունաց Ս. Գերեզմանին շուրջ կատարած եռազարդ թափօրէն յետոյ, յունաց Ամեն. Ս. Պատրիարքն ու մեր Լուսահանը՝ Հոգշ. Տ. Յակոբ Վրդ., զգեստաւորեալ, մտան Ս. Գերեզման, որուն քովի բացուածքներէն, քիչ ետք, նուիրական լոյսը դուրս պիտի գար ու ակնթարթի մը մէջ պիտի փոխանցուէր մեր վերնատան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Գերշ. Տ. Հայրիկ Սրբազանին՝ որ անով կ'օրհնէ վարը խռնուած բազմազգի ու բազմահազար հաւատացեալներու ամբոխը։ Ընդհանուր խանդավառութեան մէջ սկսան հնչել Տաճարին յունական և հայկական բոլոր զանգերն ու կոչնակները, մինչ վարը, Ս. Գերեզմանի շրջափակին մէջ, ընթացք կ'առնէ մեր եռազարդ թափօրը, գլխաւորութեամբ Հոգշ. Լուսահան Հօր՝ որ կը կրէր խոյր եպիսկոպոսական։ Մեր թափօրին կը հետևէին Ղպտոց և Ասորւոց թափօրները։ Այս մեծահանդէս արարողութիւնները տևեցին մինչև ժամը 2 կ. վ., որմէ ետք Միաբանութիւնը շքերթով համբարձեալ դէպի Մայրավանք Դաւթի բերդին դիմաց, Գերշ. Սրբազանն ու Հոգշ. Լուսահանը զգեստաւորուեցան, մինչ դպիրները սկսան «Քրիստոս Յարեաւ» շարականը երգելով յառաջանալ։ Թափօրը մուտք գործեց Մայր Տաճար, ուր Աւետարանի ընթերցումով և օրհնութեամբ ներկաները արձակուեցան։

Ժամ մը ետք, Մայր Տաճարին մէջ սկսաւ Ճրագալոյցի արարողութիւնը, որուն աւարտին, Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Օհան Աբղ. Գարագեան։ Ապա, Գերշ. Տ. Նորայր Եպս. նախագահեց Ս. Զատկի նախատօնակին՝ որմէ ետք Միաբանութիւնը զգեստաւորեալ և երգեցողութեամբ բարձրացաւ վանքի սեղանատունը։

● Կիր. 17 Ապրիլ. — Ս. ԶԱՏԻԿ: Գիշերուան ժամը 2ին, Գերշ. Տ. Ասողիկ Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը լուցեալ լապտերներով մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար։ Առաւօտեան ժամերգութիւնը մինչև «Հարց» պաշտուեցաւ Տաճարի մեր վերնատարան մէջ։ Ապա, Միաբանութիւնը, զգեստաւորեալ, իջաւ Ս. Գերեզմանի շրջափակը, ուր կատարուեցաւ եռազարդ մեծահանդէս թափօր՝ Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Գերշ. Սրբազան Հօր։ Մեր թափօրին կը հետևէին Ղպտոց և Ասորւոց թափօրները։ Ս. Գերեզմանի դրան կատարուեցաւ «Անդաստան»։ Կարճ դադարէ մը ետք մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի կենսատու Ս. Գերեզմանին վրայ։ Պատարագեց և քարոզեց Գերշ. Տ. Նորայր Եպս., շեշտելով Յարութեան դէպքին կարևորութիւնը՝ իբրև հիմնաքարը քրիստոնէական հաւատքին։ Ս. Պատարագի ընթացքին բազմաթիւ հաւատացեալներ հաղորդուեցան։ Վանք վերադարձին, Միաբանութիւնը «Քրիստոս Յարեաւ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան։

— Կէսօրէ վերջ, Մայրավանքի մեծ բակին մէջ տեղի ունեցաւ Զատկական մեծ «Անդաստանը», նախագահութեամբ Գերշ. Տ. Հայրիկ Եպիսկ.ի

● Բշ. 18 Ապրիլ. — Յիշատակ մեռելոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։ Ս. Պատարագի արարողութենէն մաս մը, մէկ ժամ տևողութեամբ, ձայնասփռուեցաւ Յորդանանի Հաշիմական Ռատիոկայանէն, որու ընթացքին Գերշ. Պատարագիչ Սրբազանը կարդաց համայն հայութեան ուղղուած Ս. Զատկի պատգամը՝ որ կ'երևի Սիոնի ներկայ թիւին սկիզբը։

digitised by A.R.A.R.@

Ս. Պատարագի երգեցողութիւնները, ինչպէս նախորդող օրերուն, կատարուեցան Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի բարձրագոյն կարգերու երկսեռ ուսանողներէն կազմուած խումբի մը կողմէ՝ զոր կը ղեկավարէր Հոգշ. Տ. Արշակ Արք. Խաչատուրեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռազարդ մեծաշանդէս Թափօր Մայր Տաճարին մէջ, գլխաւորութեամբ Գերշ. Պատարագիչ Սրբազանին, որ, ամպհովանիի տակ, կենաց Փայտի մասունքով կ'օրհնէր Տաճարը խռնուած ուխտաւոր և հաւատացեալ ժողովուրդի բազմութիւնը։ Թափօրական Հայրեր ի ձեռին ունէին սրբոց մասունքներ։ Թափօրէն ետք երգուեցաւ «Ճանապարհ»ը՝ յանկարծ ուխտաւորաց բարի ճանապարհ մաղթելու և «Տէր ողորմեա»։ Ապա, «Քրիստոս յարեաւ» շարականը երգելով, Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր Գերշ. Տ. Հայրիկ Եպս., ներկաները «Պահպանիչ»ով օրհնելէ ետք, բաժնեց անոնց մէկական Ս. Պատարագի նշխար։

● Դշ. 19 Ապրիլ. — Գ. օր Ս. Զատկի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ. Պատարագեց Հոգշ. Տ. Վրթանէս Արք. Գալայճեան։ Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ բազմաթիւ խնդրատուաց ուխտաւորներու ննջեցեալներուն համար։

— Աւետման Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան։

● Դշ. 20 Ապրիլ. — Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Ղազարեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար՝ ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և աւուր պատշաճի քարոզ մը խօսեցաւ Գերշ. Հանդիսապետ Եպս.ը։

● Կիր. 24 Ապրիլ. — Նոր Կիրակի (Յիշատակ Նահատակաց): Հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց, ըստ առաջնորդութեան, Լուսահան Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։ Ս. Պատարագէն ետք, Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի նախագահութեամբ, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունք՝ Ապրիլեան եղեռնի մեր մէկ միլիոն նահատակաց հոգիներուն համար։ Հոգեհանգստեան կարգեր կատարուեցան նաև Տաճարի գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքի շիրմին վրայ, հին կրօնաւորաց և Զամ-Թաղի աւմ. գերեզմանատուներուն մէջ։

● Շբ. 30 Ապրիլ. — Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Նախատօնակը՝ մեր վերնատան մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զիլճանեան։

● Կիր. 1 Մայիս. — Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ապա, Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, քարոզեց աւուր պատշաճի, և Ս. Պատարագէն ետք նախագահեց Ս. Գերեզմանին առջև կատարուած «Անդաստան»ին։

● Կիր. 8 Մայիս. — Կարմիր Կիրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան։ Քարոզեց Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Տեփոյեան, մեկնաբանելով Հին Կտակարանի հեղինակներուն ըրած գուշակութիւնները Մեսիայի մասին։

● Կիր. 15 Մայիս. Տօն Երևման Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Պատարագիչն էր Հոգշ. Տ. Փառէն Արք. Աւետիքեան։ Քարոզեց Գերշ. Տ. Ասողիկ Եպս., բնաբան ունենալով օրուան Աւետարանէն «Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս» (Յովհ. է. 16)։ Ըսաւ թէ մինչ հրէից քահանայապետները իրենց խօսքին աւելի կշիռ տալու համար վկայութեան կը կանչէին Մովսէսը կամ մարգարէներէն մին, Քրիստոս բացորոշ կերպով իր խօսքերը կը հիմնաւորէր ուղղակի Իր Հօր վկայութեամբ՝ որուն կողմէ ղրկուած էր աշխարհ։ Աւագ Խորանին վրայ կը տեսնուէր վառ կանթեղներով զարդարուն Ս. Խաչին Նշանը։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Շբ. 26 Մարտ. — Առաւօտեան ժամը 9.30ին, Գերշ. Տ. Եղիշէ Սրբազան վերադարձաւ Վանք։

● Կիր. 27 Մարտ. — Կէսօրէ առաջ ժամը 9.30ին, Իօլանտա Բամազանի (Էլ-Ֆիթր) տօնին առթիւ, ի դիմաց Պատրիարքարանիս, Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Ղազարեան, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի և Տիար Կարապիս Հինդլեանի, շնորհաւորութեան գնաց քաղաքիս Վսեմ. Կառավարչին, Ընդհ. Ոստիկանապետին և Վսեմ. Քաղաքապետին։

● Եշ. 7 Ապրիլ. — Քաղաքիս Լիբանանեան Նոր Ընդհ. Հիւպատոս Պր. Միշէլ Շիտիաք իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքքարանիս և ընդունուեցաւ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի և Հոգշ. Հայրերու կողմէ։

● Դշ. 13 Ապրիլ. — Առաւօտեան ժամը 10ին, Գերշ. Տ. Հայրիկ Եպս., ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Յուսիկ Արք. Պաղտասեանի և Տիար Կարապիս Հինդլեանի, փոխ այցելութեան գնաց Լիբանանեան Նոր Ընդհ. Հիւպատոսին։

— Կէսօրէ առաջ, Հոգշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան մեկնեցաւ Հայֆա, Ս. Զատկի հանդի-

digitised by A.R.A.R.@

ութեանց Նախագահելու և վերադարձաւ Գշ. 19 Ապրիլին։

● Բշ. 18 Ապրիլ. — Կէսօրուան ժամը 12.30ին, Ս. Զատկի տօնին առթիւ Պատրիարքարան շնորհաւորութեան եկան քաղաքիս Վսեմ. Կառավարիչը, Վսեմ. Մութասարրըֆը, Ընդհ. Ոստիկանապետը և Ս. Տեղեաց Ոստիկանապետը։

— Կէսօրէ վերջ, ի պատիւ Ն. Վ. Վարչապետին, ինչպէս նաև Ս. Զատկի տօնին առիթով Ս. Երկիր գտնուող զբօսաշրջիկներուն, Քաղաքիս Վսեմ. Կառավարչին կողմէ, Ամպասատոր պանդոկին մէջ տրուած թէյասեղանին ներկայ եղան Գերշ. Տ. Հայրիկ Եպս., Հոգշ. Տ. Յուսիկ Արք. և Տիար Կարպիս Հինդլեան։

● Գշ. 19 Ապրիլ. — Առաւօտեան ժամը 9.30էն սկսեալ, Ս. Զատկի տօնին առթիւ, Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհաւորութեան գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին, Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոսին և Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին։

— Միաբանութեան վերադարձէն յետոյ, Ս. Զատկի տօնին առթիւ, Պատրիարքարան յաջորդաբար շնորհաւորութեան եկան հետևեալները. — Յունաց Պատր. Փոխանորդը, Ֆրանչիսկեանց Կիւսթոսի Փոխանորդը, Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքը, Ղպտոց Գերշ. Եպս.ը, Ասորւոց Պատր. Փոխ.ը և Հապէշաց Գերշ. Եպս.ը՝ իրենց Միաբանութեան անդամներով, Անկլիքան զոյգ Եպիսկոպոսները, Յոյն Կաթոլիկ Պատր. Փոխ.ը, Լուտերականներու Երէցը, Օկոստա Վիքթորիա Հիւանդանոցի Տնօրէնը, Պապական Նուիրակը, Վսեմ. Քաղաքապետը՝ քաղաքապետական կազմով, Անգլիական Ընդհ. Հիւպատոսը, Զբօսաշրջիկներու Գրասենեակի Տնօրէն Պր. Լութֆի Մուգրապի և Մարոնիթներու Գերշ. Եպս.ը՝ որուն կ'ընկերակցէր հիւրաբար Ս. Երկիր գտնուող Սուր-Սայտայի Եպս. Գերշ. Ժոզէֆ Ժ. Խուրի։

● Դշ. 20 Ապրիլ. — Կէսօրէ առաջ, նոյն առթիւ, Գերշ. Տ. Հայրիկ Եպս., հետն ունենալով Հոգշ. Տ. Յուսիկ Արեղան և Տիար Կ. Հինդլեանը, շնորհաւորութեան գնաց Անկլիքան զոյգ Գերշ. Եպիսկոպոսաց և Պապական Նուիրակին, որմէ ետք, Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, ընկերակցութեամբ մի քանի Հոգշ. Հայրերու, այցելեց Ղպտոց, Հապէշաց և Մարոնիթներու Գերշ. Եպիսկոպոսներուն, Ասորւոց և Յոյն Կաթոլիկներու Պատր. Փոխանորդներուն և Լուտերականներու Երէցին։

● Բշ. 25 Ապրիլ. — Առաւօտեան ժամը 10ին, քաղաքիս Վսեմ. Կառավարչի հեռաձայնային հաղորդագրութեամբ տրուած հրաւէրին ընդառաջելով, Գերշ. Տ. Հայրիկ Եպս., հետն ունենալով Տիար Կ. Հինդլեանը, տեսակցութիւն մը ունեցաւ Վսեմ. Կառավարչին հետ, Պատրիարքարանի գործերու կապակցութեամբ։

— Երեկոյեան ժամը 6ին, քաղաքիս Սվիս-Էյր ընկերութեան տնօրէնութեան կողմէ, ի պատիւ ընկերութեան Միջին Արևելքի Ընդհ. Տնօրէն Պր. Ռէնէ Վոլթի սարքուած Քօքթէյլ Բարթիին ներկայ եղան Գերշ. Տ. Հայրիկ Եպս., Հոգշ. Տ. Դաւիթ Արք. և Տիար Կարպիս Հինդլեան։

● Գշ. 10 Մայիս. — Առաւօտեան ժամը 9.30ին, օդային գծով և Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի հրահանգով Ս. Աթոռ ժամանեց Եւրոպայի թեմի Կաթողիկոսական Պատուիրակ և Փարիզի Առաջնորդ Գերշ. Տ. Սերովբէ Եպս. Մանուկեանը։ Գերշ. Սրբազանը Ս. Յակոբեանց Տաճարի դուռէն «Հրաշափառով» առաջնորդուեցաւ Մայր Տաճար, ուր Ս. Գլխադրի մատրան մէջ իր ուխտը կատարելէ ետք, եկեղեցւոյ աւանդէն Միաբանութեան և ժողովուրդին հաղորդեց Ն. Ս. Օծութիւն Վեհ. Կաթողիկոսին Հայրապետական ողջոյնները, ու կոչ ըրաւ բոլորին որ մոռնան անցեալի տխուր իրադարձութիւնները, ու միակամ սիրով և միացեալ ոյժերով նուիրուին ազգային-հոգևոր այս Տան պայծառացման։ Ապա Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարանի մեծ դահլիճը՝ ուր Գերշ. Սրբազանը դիմաւորուեցաւ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի կողմէ, և ուր տեղի ունեցան սիրալիր խօսակցութիւն և պատուասիրութիւն։

● Դշ. 11 Մայիս. — Առաւօտեան ժամը 10ին, նախապէս առնուած ժամադրութեամբ, Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան և Գերշ. Տ. Սերովբէ Եպս. Մանուկեան պաշտօնական այցելութիւն տուին քաղաքիս Վսեմ. Կառավարչին՝ Կառավարչատան մէջ։ — Գերշ. Սրբազանները վանական խնդրով Վսեմ. Կառավարչին ներկայացան նաև Գշ. 17 Մայիսի առաւօտեան ժամը 8.30ին։

● Բշ. 16 Մայիս. — Կէսօրէ վերջ ժամը 4ին, Ն. Վսեմ. Ներքին Գործոց Նախարարի հրաւէրին ընդառաջելով և Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի դէպի արտասահման կատարած առաքելութենէն Արքունիք վերադարձի բարեբաստիկ առիթով, Ամմանի զինուորական օդակայան դիմաւորութեան գնաց Գերշ. Տ. Հայրիկ Եպս., ընկերակցութեամբ Նորընտիր Աւագ Թարգման Հոգշ. Տ. Օհան Արք. Գապագեանի։

## ՋԱՏԿԱԿԱՆ ՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Այս տարի թէ Հին և թէ Նոր Տոմարներու համաձայն Ս. Զատիկը կը հանդիպէր միևնոյն օրը, այդ պատճառաւ Ս. Քաղաքը լեցուն էր ամենազգի ուխտաւորներու բազմութեամբ։ Հայ ուխտաւորներու թիւը կը հասնէր ութ հարիւրի, որոնք կարելի եղածին չափ տեղաւորուեցան Վանուցս բնակելի սենեակներուն, և դպրոցներուն մէջ, մաս մըն ալ՝ վրաններու տակ։ Տօնական օրերու հոգեպարար հանդէսներով և Տնօրինական Սրբավայրերու բարեպաշտիկ այցելութեամբ մեր ուխտաւորները մխիթարուեցան, և կրօնական ու ազգային նոր ու գեղեցիկ ներշնչումներով զօրացած վերադարձան իրենց տուները։

digitised by A.R.A.R.@